ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 30

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1.Այգավան համայնքի 2016թ-ի տեղական տուրքերի և վճարների մասին:
/ Զեկ. Լ. Սահակյան/

2.Մսուր-մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վճարների չափի սահմանում:
/Զեկ. Վ.Հարությունյան/

3.Այգավան համայնքի սեփականության գույքի գույքագրման արդյունքների հաստատման մասին:
/Զեկ. Վ.Հարությունյան/

4. Այգավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատում:
/Զեկ. Վ.Հարությունյան/

5.Այգավան համայնքի 2015 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/ Զեկ. Լ. Սահակյան/

Կողմ – 5 Դեմ-0 Ձեռնպահ-0
1.ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 31-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով,

ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇԵՑ՝

1.Հաստատել Այգավան համայնքի 2016թ-ի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ – 5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2015 թվականի
նոյեմբերի 20 –ի թիվ 31-Ն որոշման

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

2016թ-ի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր.
1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարական (տեղադրման) թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20000 դրամ.
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկների համար՝ 36000 դրամ.
բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհնուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:
2)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ.
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցայների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ն կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4)Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար 2500 դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար 2500 դրամ:

5) Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 250 դրամ՝ 1 քմ-ի համար:

բ) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

6) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի , զվարճանքի, շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24 ^{00} –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ,

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100000 դրամ,

գ) բաղնիքների (սաունաների) համար 200000 դրամ,

դ) խաղատների համար 1000000 դրամ,

ե) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 300000 դրամ:

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 110000 դրամ:

7)Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է.

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար 2000 դրամ:

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ:

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

8) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում՝ 2000 դրամ:

9) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար սահմանվում է 5000 դրամ:

10) Տեխնիկական հեղուկների վաճառքի համար տեղական տուրքը սահմանել 30000 դրամ տարեկան:

11) Ամուրդ – վաճառքների և մրցույթների համար սահմանել յուրաքանչյուր մասնակցից 5000 դրամ վճար:
12) Աղբահանության համար տեղական վճարը սահմանել ամսական յուրաքանչյուր շնչից 50 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 32-Ն

ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19 կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել մսուր-մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական գումարը յուրաքանչյուր երեխայի համար 4000 դրամ ամեն ամիս:

Կողմ – 5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 33

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի գույքի գույքացուցակները՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

Կողմ – 5 Դեմ-0 Ձեռնպահ-0
1.ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Կ.Տ.

Հավելված թիվ 1
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2015 թվականի
նոյեմբերի 20 –ի թիվ 33 որոշման

Այգավանի գյուղապետարանի գույքացուցակ

ՀՀ	անվանում	քանակը	գինը	գումարը	Կապ նորոգում	մաշվածք	մնացորդ. արժեքը
1	Գ/Պ շենք	1	20217900	20217900		-	20217900
2	Կուլտ.տուն	1	46437515	46437515		-	46437515
3	համակարգիչ	1	189440	189440		-	189440
4	օդափոխիչ	1	90110	90110		-	90110
5	համակարգիչ	1	65540	65540		-	65540
6	բանբոցս	1	55320	55320		-	55320
7	հեռուստացույց	1	105490	105490		-	105490
8	սեղան համակարգչի	1	15400	15400		-	15400
9	մոնիտոր	1	54400	54400		-	54400
10	գրասեղան մեծ	1	51200	51200		-	51200
11	սեղան մեծ	1	24570	24570		-	24570
12	սեղան լրագրի	1	12290	12290		-	12290
13	աթոռ	2	57600	115200		-	115200
14	գրասեղան	1	17920	17920		-	17920
15	գրասեղան	2	5120	10240		-	10240
16	բազմոց	1	31500	31500		-	31500
17	գրասեղան	4	57380	229520		-	229520
18	պահարան	1	28680	28680		-	28680
19	պահարան հագ.	1	19400	19400		-	19400
20	գրապահարան	1	1920	1920		-	1920

21	չիրկիզվող պահ.	4	6560	26240		-	26240
22	հեռախոս սեղանի	1	5720	5720		-	5720
23	աթոռ	12	49160	589920		-	589920
24	աթոռ պտտվող	1	20500	20500		-	20500
25	աթոռ պտտվող մեծ	1	35900	35900		-	35900
26	աթոռ	2	30800	61600		-	61600
27	ավտոմեքենա	1	8550000	8550000		-	8550000
28	ջահ	2	2048	4096		-	4096
29	աթոռ	12	128000	1536000		-	1536000
30	օֆիսի բազմոց	1	96000	96000		-	96000
31	գրապահարան	1	57600	57600		-	57600
32	կշռատուն	1	150370	150370		-	150370
33	չորանոց	1	59160	59160		-	59160
34	պահեստ	1	129450	129450		-	129450
35	ալեհավաք	1	13540	13540		-	13540
36	ռադիո մոդեմ	1	16000	16000		-	16000
37	համակարգիչ	1	300000	300000		-	300000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ

/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 34-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հաշվի առնելով համայնքի բյուջեի հնարավորությունները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8 և 26 կետերով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ – 5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Հավելված թիվ 2
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2015 թվականի
նոյեմբերի 20 -ի թիվ 34-Ն որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ - 14 - / 2016թ./
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային Միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		195000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	150000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	151000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	140000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ	2	290000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	96000
Համայնք ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	92000
Քաղաքացիական աշխատանք		
Օպերատոր	1	116000
Գործավար	1	99000
Գրադարանավար	1	75000

Մշակույթի տան տնօրեն	1	79000
Տեխսպասարկման անձնակազմ		
Պահակ	1	77904
Հավաքարար	1	72752
Ընդամենը՝		1633656

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 35-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի 2015 թվականի բյուջեի փոփոխությունը՝

1.Կառավարման մարմնի պահպանում 4111 հոդվածից 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ հատկացնել կառավարման մարմնի պահպանում՝ 4212 հոդվածին:

2.Հասարակական կազմակերպություն, շահույթ չհետապնդող՝ 4819 հոդվածից 400000 / չորս հարյուր հազար/ դրամ տալ նախադպրոցական կրթություն՝ 4639 հոդվածին:

3.Սոց. հատուկ արտոնություններ՝ 4726 հոդվածից 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ տալ ջրային կառույցների շահագործում և պահպանում՝ 4212 հոդվածին:

4.Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի՝ 4891 հոդվածից 500000 /հինգ հարյուր հազար / դրամ հատկացնել բարձրագույն կրթություն՝ 4239 հոդվածին:

Կողմ – 5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.